

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի օգոստոսի 21-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի ստուգարքների և քննությունների կազմակերման հարցը:
2. 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի նախապատրաստման մասին:
3. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին- 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի ստուգարքների և քննությունների կազմակերման հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի կազմակերպման նպատակով ամբիոնների և դեկանատների հետ փոխհամաձայնեցման սկզբունքով կազմվել է ժամանակացույց և ներկայացվել հաստատման: Քննական ժամանակացույցը հաստատվելուց հետո տեղակայվել է ԳՊՀ պաշտոնական կայքում: Լուծարային շրջանը կազմակերպվելու է հոկտեմբերի 14-ից՝ չորս շաբաթ սևտողությամբ:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Քննարկվեցին ուսումնական պլանները:

Որոշեցին – Մասնագիտությունների բարելավված ուսումնական պլանները ներկայացնել դասախոսների և արտաքին փորձագետների քննարկմանը, իսկ մասնագիտությունների ուսումնական պլանները ամբիոններում քննարկելուց հետո ներկայացնել հաստատման:

Քննարկվեց սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների հարցը:

Որոշեցին – կազմել այն ուսանողների ցանկը, որոնց ընտանիքները գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և ներկայացնել ռեկտորատ՝ սահմանված կարգով նյութական օժանդակության նպատակով:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան